«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Դեկտեմբերի 2021, N 7 - 9

041201.01.7 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ 041201.05.7 «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» 2 ՏԱՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՆՈՐ՝ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ ձևավորված «ՀՊՏՀ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԲ, ՈԱԱԿ և ԱՓՇՏԱԿ հիմնադրամներից կազմված մասնագիտական փորձագիտական խմբերի կողմից մշակված մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության նոր՝ «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը հաստատելու մասին հարցը, **արձանագրելով,** որ կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը մշակվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի» դրույթների պահպանմամբ, մշակող փորձագետների կողմից քննարկվել են կրթական ծրագրերը սպասարկող առանցքային ամբիոնների հետ, միաձայն՝ կողմ քվեարկությամբ հաստատվել են համալսարանի բանկային գործի և ապահովագրության ու ֆինանսների ամբիոնների 2021 թվականի դեկտեմբերի 15-ի համատեղ նիստում և հաստատման են երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դեկտեմբերի 16-ի N 3 նիստում, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության նոր՝ «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը:
2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ իր համապատասխան հրամանով փոփոխություն կատարել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի N 647-Ա/Ք հրամանում և 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրերի ցանկում ներառել նոր՝ 041201.12.7 «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագիրը:

3. 041201.12.7 «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագրի հաստատումից հետո դիմել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ 041201.05.7 «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» 2 տարի տևողությամբ կրթական ծրագրի լիցենզիան դադարեցնելու և 041201.12.7 «Ֆինանսական շուկաներ» 1,5 տարի տևողությամբ առկա և 2 տարի տևողությամբ հեռակա կրթական ծրագրերը լիցենզավորելու խնդրանքով:
4. **2023-2024** ուսումնական տարվանից սկսած ընդունելությունն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության նոր՝ 041201.12.7 «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի նոր ուսումնական պլաններով:
5. **2022-2023** ուսումնական տարում ընդունելությունը կազմակերպել գործող 041201.05.7 «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» կրթական ծրագրով:
6. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2023-2024** ուսումնական տարվա համար մինչև 2023 թվականի մայիսի 30-ը 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության նոր՝ 041201.12.7 «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանի համապատասխան մոդուլները:
7. Հանձնարարել համալսարանի մակրոէկոնոմիկայի, միկրոէկոնոմիկայի, ֆինանսների, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների վարիչներին՝ 2022-2023 թվականներին ամբիոնների ակադեմիական կազմի ներկայացուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգով սահմանված աշխատանքները պլանավորել և կազմակերպել ելնելով նոր ուսումնական պլաններում ներառված դասընթացների որակյալ սպասարկումն իրականացնելու անհրաժեշտությունից՝ մինչև 2022 թվականի մարտի 30-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և արտաքին կապերի դեպարտամենտի հետ հստակեցնելով վերապատրաստվող ակադեմիական կազմի ցանկը և վերապատրաստման մասնագիտական մոդուլները:
8. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան